ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA

10.8.2017թ.
1101/08238

ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ասլանյան,

Տեղեկացնում ենք, որ ս.թ. սեպտեմբերի 19-29-ը Հայաստան կայցելի Վյուրցբուրգ քաղաքում գործող «Ինտերկապ» գերմանական բարեգործական ընկերության նախագահ, «Ռայհարթ&Քոզել» ընկերության համասեփականատեր Ռայներ Քոզելը:

Ռ. Քոզելի բարեգործությունը Հայաստանում սկսվել է Սպիտակի երկրաշարժից հետո: Տարիներ շարունակ Ռ. Քոզելը աջակցություն և օժանդակություն է ցուցաբերում Վանաձորի Տարեցների տանը, երեխաների խնամքի եւ պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատությանը, թիվ 13 դպրոցին, կազմակերպում հայ ուսանողների, արվեստագետների այցելություններ Գերմանիա՝ փորձի փոխանակման նպատակով, ինչպես նաև ճամփորդություններ Հայաստան: 2016թ. վերջինս Վյուրցբուրգ քաղաքում հիմնադրել է հայկական կիրակնօրյա դպրոց: «Ինտերկապ» գերմանական բարեգործական ընկերությունն ակտիվ համագործակցում է «Ինտերկապ» հայկական ընկերության հետ:

Հաշվի առնելով Ռ. Քոզելի երկար տարիների բարեգործական գործունեությունը Հայաստանում և շարունակական կապը Վանաձորի հետ՝ առաջարկում ենք Ռ. Քոզելին շնորհել «Վանաձորի պատվավոր քաղաքացի» կոչումը:

Խնդրում ենք կայացված որոշման մասին հայտնել ԱԳՆ:

Հարգանքով՝

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԿԱՐԵՆ ՆԱԶԱՐՅԱՆ

Եվրոպայի վարչություն
Երկկողմ հարաբերությունների առաջին բաժին
Հեռ.060 620 654

ՀՀ Լոռու Մարզ
Վանաձորի Քաղաքապետարան
«16» 08 2017թ.
Մտից N 061 Գործ N 575

Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն #2, Երևան 0010, Հեռ.՝ +374 60 620000, Ֆաքս՝ + 374 60 620062
Government House #2, Vazgen Sargsyan 3, Yerevan 0010, Tel: +374 60 620000, Fax: + 374 60 620062, E-mail: info@mfa.am www.mfa.am